ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1644-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂ, 20-ՐԴ ՓՈՂՈՑ, 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0124-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.18244 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ, 65-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 14.10.2025թ. N 175-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետարանի N 05/111.6/07498-2025 - 10/09/2025 գրությունը, ՀՀ կառավարության 2021-2026թթ գործունեության միջոցառումները (ՀՀ մարզերում գործող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող 50 բժշկական կազմակերպությունների շենքերի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով), սեփականության իրավունքի N 07102025-06-0018 վկայականը՝ որոշում եմ.

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 20-րդ փողոց, 11 հասցեում գտնվող, կադաստրային 06-112-0124-0003 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.18244 հեկտար մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ «Օձունի ԲԱ» ՀՈԱԿ բուժհաստատության կառուցման նպատակով:

2.Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Հողամասինվիրաբերության մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի նվիրաբերության մասին պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**